

կը մնան եւ միայն *Ֆէսերը* կը փոխուին, եւ այն ալ երկու տարին անգամ մը:

Հոս տարին երկու հարիւր յիսուն օր կը տօնեն եւ կը հանգչին: Ոչ ոք կը փափագի հարստութիւն դիզելու, փառք վաստկելու եւ համբաւ հանելու. ամեն մարդ կ'փափագի ձուկ դիզելու, ձուկ վաստկելու եւ ձուկ հանելու. տկար ստամոքս ունենալով՝ ոչխարի կամ կովու միսը կ'դպչի իրենց: Եթէ իրենց սիրտերուն մէջ քիչ մը դպրոցասիրութեան եռանդ ունին՝ ան ալ կ'մարի այն գինիէն, զոր կը խմեն ձուկին վրայ եւ որ կը թափուի իրենց եռանդին վրայ: Եթէ օղի խմէին՝ թերեւս եռանդն բորբոքէր. բայց ասոնք ուրիշ թաղերու ազգայիններուն պէս երեկոները գինետոններու մէջ շատ չեն անցունէր, այլ քանի մը գաւաթ խմելով՝ իրենց տուները կ'երթան:

Ասոնց սովորութիւնն է՝ ամեն գիշեր կամ ամեն կիրակի կամ տօնի օրերն մէյմէկ տուն հաւաքուիլ եւ զրօնուլ: Ասոնց խօսակցութիւնն ընդհանրապէս կկազմուի նարտէ կամ խաղի թուղթ: Շատ անգամ ալ նաւամատոյցի զրօսարանին մէջ նարտ կ'խաղան հրէաներու հետ, որոնցմէ զուարճախօսութեան դաս ալ կ'առնեն *Անի* ոճով: Նարտ կամ թուղթ խաղալու ատեն կորսնցնողը իրաւունք կ'ունենայ ուզածին եւ կրցածին չափ հայհոյութիւն ընելու. վաստկողը կատարեալ լռութիւն պիտի պահէ եւ երբեմն քթին տակէն պիտի խնդայ, ընկերն ա՛լ աւելի բարկացնելու համար: Հայհոյութեան մասին՝ այս թաղն պահպանողական կուսակցութեան կը վերաբերի:

Այս թաղը կրնակէր վսեմափայլ եւ բարձրապատիւ Ստեփան փաշա Ասլանեան, որ, ինչպէս յայտնի է՝ Երուսաղէմի հաշիւները անձնանուիրաբար քննելու համար երկու հարիւր ոսկի օսմանեան առաւ վեհանձնաբար:

Կոկիկ եկեղեցի մը կայ հոս, որ կոկիկ եւ գեղեցկաձայն քահանաներ ունի, բայց կոկիկ ջերմեռանդներ չունի:

Իզական սեռն ալ գրեթէ արականին պէս կեանք կ'անցունէ. ուսումնասիրութեան վրայ գաղափար ունենալու պատրաստութիւն չունի դեռ: Օրուան կէսը կ'անցունէ տապկելով այն ձուկերն, որք արականէն կուղղուին: Ինչպէս Քերականութեան, նոյնպէս ալ Գուգկունճուքի մէջ արականն նախապատիւ է իզականէն. հոս կինն իւր երկանը յետեւէն կ'երթայ, մինչդէռ Բերայի մէջ ասոր հակառակն է եւ Էրիկն կնոջը յետեւէն երթալու ստիպուած է ըստ աւետարանին, թէ «թողցէ այր զհայր եւ զմայր իւր եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ»: